ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ապրիլի 2014 թ.

Հաշվի առնելով ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովում ՀՀ ԳԱԱ նախագահի և ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղարի զեկուցումներում և զեկուցումների քննարկմանը մասնակցած գիտնականների ելույթներում բարձրացված հարցերը, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ գիտական բաժանմունքների տարեկան ընդհանուր ժողովների որոշումները, ՀՀ ԳԱԱ Ընդհանուր ժողովը որոշում է.

1. Հանձնարարել ԳԱԱ նախագահությանը.

ա/ մշակել գիտական կազմակերպությունների գործունեության գնահատման չափորոշիչներ,

բ/ մշակել կիրառական հետազոտությունների արդյունավետության բարձրացման ռազմավարական ծրագիր,

գ/ նախապատրաստել ՀՀ ԳԱԱ համակարգի ինֆրակառուցվածքի արդիականացման հատուկ պետական ծրագիր,

դ/ դիմել ՀՀ Կառավարությանը ապահովելու ֆինանսական աջակցություն ՀՀ ԳԱԱ ինստիտուտներում ստացված կիրառական բնույթի արդյունքները տնտեսության տարբեր ճյուղերում ներդրման նպատակով:

2.Սոցիալական պայմանները՝ հատկապես ցածր աշխատավարձը, բերում են գիտության կադրային ներուժի թուլացմանը: Էապես փոքրացել է միջին սերնդի գիտական աշխատողների թիվը: ՀՀ ԳԱԱ համակարգի աշխատողների միջին աշխատավարձը կազմում է միջին հանրապետական աշխատավարձի համարյա կեսը: Համակարգի աշխատողների ցածր աշխատավարձը նպաստում է կադրերի արտահոսքին: Ձեռնարկել միջոցառումներ ԳԱԱ աշխատողների սոցիալական բնույթի պրոբլեմները լուծելու մոտակա ժամանակահատվածում:

3.Դիմել ՀՀ Կառավարությանը գիտական աստիճաններին տրվող հավելավճարները կենսաթոշակին ավելացնելու նպատակով:

4. Ցեղասպանության 100-ամյակի կապակցությամբ կազմակերպել գիտական և գիտամասսայական միջոցառումների շարք:

5.Դիմել ՀՀ Կառավարությանը՝ խորհրդային ժամանակներում 12 հատորով լույս տեսած «Հանրագիտարանի» նոր հրատարակության համար լրացուցիչ ֆինանսներ հատկացնելու :

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀ Ռ.Մ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ-ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ.Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ